

**ՀՀ կենտրոնական բանկի 2012-2014 թթ.
ռազմավարությունը**

Բովանդակություն

1. ՀՀ կենտրոնական բանկի զարգացման փուլերը	3
2. ՀՀ կենտրոնական բանկի առաքելությունը, արժեքները և տեսլականը	5
3. ՀՀ կենտրոնական բանկի ռազմավարական զարգացման ուղղությունները	9
Գների կայունության ապահովում	10
Ֆինանսական կայունության ապահովում	12
Ազգային արժույթի շրջանառության ապահովում	15
Ինստիտուցիոնալ զարգացում	17
Հավելված	20

- **Ազգային արժույթի ներդրում:** 1993 թ. ընդունվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, ըստ որի՝ ազգային բանկը վերանվանվում է Կենտրոնական բանկ: Հայաստանի Հանրապետության դրամաշրջանառության կարգավորման պետական հանձնաժողովի 19.11.93 թ. թիվ 15 որոշմամբ ՀՀ տարածքում շրջանառության մեջ է դրվում ազգային արժույթը՝ դրամը:
- **Դրամավարկային քաղաքականության ձևավորում:** 1994 թ. ՀՀ կենտրոնական բանկն առաջին անգամ մշակում է դրամավարկային քաղաքականության ծրագիր, որով որդեգրում է գնաճի զսպման ռազմավարությունը:
- **Բանկային հիմնարար օրենքների ընդունում:** 1996 թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունում է ՀՀ բանկային համակարգը կարգավորող՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկերի սնանկացման մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքները: Կենտրոնական բանկի համար առաջնային է դառնում գների կայունության ապահովումը՝ որպես հիմնական խնդիր, ինչպես նաև դրվում է բանկային համակարգի առողջացման միջոցառումների ծրագրի հիմքը:
- **Ազգային վճարահաշվարկային համակարգի ներդրում:** 1996-2001 թթ. Հայաստանում ներդրվում են միջբանկային էլեկտրոնային վճարումների BANKMAIL, պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների BOOKENTRY համակարգերը, միջազգային վճարումներում լայնորեն սկսում է կիրառվել SWIFT համակարգը: Միաժամանակ դրվում են միջազգային չափանիշներին համապատասխան ազգային վճարահաշվարկային համակարգի հիմքերը՝ ստեղծվում է ԱրՔա միասնական վճարահաշվարկային համակարգը:
- **Բանկային օրենսդրության դաշտի կատարելագործում և ենթակառուցվածքների ձևավորում:** 2002-2004 թթ. բանկային օրենսդրության մեջ կատարվում են էական փոփոխություններ և նորամուծություններ, որոնց շնորհիվ Հայաստանում ստեղծվում է ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման կարևորագույն ինստիտուտը: Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկը ստանձնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պատասխանատվությունը: Ավարտվում է բանկային համակարգի առողջացման գործընթացը, ինչի արդյունքում հայկական բանկերը սկսում են առանձնանալ կապիտալի համալրման բարձր մակարդակով:

- **Կենտրոնական բանկը՝ որպես մեգակարգավորիչ և ֆինանսական կայունության պատասխանատու:** 2006 թ., միջազգային փորձին համահունչ, Հայաստանի Հանրապետությունում ներդրվում է ֆինանսական կարգավորման և վերահսկողության ռիսկերի վրա հիմնված միասնական համակարգ: Ֆինանսական համակարգի բոլոր մասնակիցների գործունեության կարգավորման և վերահսկողության գործառույթը վերապահվում է Կենտրոնական բանկին: Այսպիսով՝ ԿԲ-ն ստանձնում է ֆինանսական համակարգի մեգակարգավորչի դերը: Կենտրոնական բանկը ստանձնում է նաև ֆինանսական կայունության ապահովման պատասխանատվությունը: Ֆինանսական, մասնավորապես՝ բանկային համակարգում ներդրվում է կորպորատիվ կառավարման մշակույթը: Բանկային համակարգն աչքի է ընկնում ծառայությունների բազմազանությամբ և առողջ մրցակցային մթնոլորտով:
- **Գնաճի նպատակադրում:** 2006 թ. Կենտրոնական բանկն անցում է կատարում գնաճի նպատակադրման ռազմավարությանը:
- **Ֆինանսական համակարգի զարգացում, ինստիտուցիոնալ և ենթակառուցվածքային բարեփոխումներ:** 2007-2011 թթ. Կենտրոնական բանկը նախաձեռնում է ֆինանսական համակարգի գործունեությանն առնչվող օրենսդրական բարեփոխումներ, որի արդյունքում դրվում է ոչ բանկ ֆինանսական հատվածի՝ մասնավորապես ապահովագրական, կապիտալի շուկաների համակարգային և ենթակառուցվածքային բարեփոխումների հիմքը: Հայկական շուկա է մուտք գործում միջազգային լավագույն օպերատորներից մեկը՝ «ՆԱՍԴԱԲ Օ-Էմ-Էքս»-ը, ստեղծվում է սպառողների շահերի պաշտպանության ինստիտուտը, իր գործունեությունն է ծավալում ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը: Ներդրվում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) համակարգը:

2012 - 2014 թթ. Կենտրոնական բանկի կողմից նախանշվող զարգացման հիմնական ուղղվածությունը: Ֆինանսական համակարգի բազմազանացում (դիվերսիֆիկացիա): Ֆինանսական համակարգի ինստիտուցիոնալ և ենթակառուցվածքային բարեփոխումների շարունակականության ապահովում՝ ուղղված համակարգի մրցունակ և արդիական կառուցվածքի ձևավորմանը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պետական անկախ կառավարման կառույց է, որի գործունեության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքում գների կայունության ապահովումն է:


Կենտրոնական բանկի առաքելությունն է.

- ✓ լինել միջազգայնորեն ճանաչված՝ որպես անկախ, դինամիկ զարգացող, հեղինակավոր, թափանցիկ, գիտելիքին միտված, միջազգային ֆինանսական համակարգի զարգացման միտումները գնահատող արդյունավետ կառույց,
- ✓ պահպանել տնտեսական միջավայրի փոփոխություններին արագ արձագանքելու և տնտեսական գործընթացների վրա արդյունավետորեն ազդելու ինստիտուցիոնալ կարողությունները,
- ✓ մշտապես աջակցել երկրի մակրոտնտեսական կայուն զարգացմանը՝ լինելով տնտեսական մարտահրավերներին դիմակայելու գործում ՀՀ Կառավարության կարևոր գործընկերը:

Կենտրոնական բանկի կարևորագույն խնդիրներից են.

- ֆինանսական համակարգի կայունության ապահովումը,
- ազգային արժույթի թողարկման և շրջանառության ապահովումը,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը,
- Հայաստանի Հանրապետության արտաքին պահուստների կառավարումը,
- ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով սահմանված՝ այլ ոլորտների կարգավորումը և վերահսկողությունը:

ՀՀ ԿԲ արժեքները և շահառուները



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Անկախություն. Կենտրոնական բանկի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է: Կենտրոնական բանկը իր գործունեությունը իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից ինչպես ԿԲ խնդիրների նպատակադրման, այնպես էլ այդ խնդիրներին հասնելու գործիքակազմի ընտրության մեջ: Անկախությունը անհրաժեշտ է գների և ֆինանսական կայունության ապահովմանը նպատակաուղղված արդյունավետ քաղաքականություններ իրականացնելու համար, որով Կենտրոնական բանկն իր ներդրումն է ունենում երկարաժամկետ հատվածում կայուն տնտեսական աճի ապահովման գործընթացում:

Թափանցիկություն. Կենտրոնական բանկը համոզված է, որ թափանցիկությունը անհրաժեշտ և կարևոր պայման է իր հաշվետվողականության և անկախության ապահովման գործընթացում, լիովին գիտակցելով արդյունավետ հաղորդակցման՝

հասարակության համար հասկանալի և վստահելի լինելու անհրաժեշտությունը՝ հասարակության մոտ Կենտրոնական բանկի կողմից բոլոր ոլորտներում իրականացվող քաղաքականությունը համարժեք կերպով ընկալելու գործում: Գործողությունների հետևողականությունը ուղղված է հանրության կողմից Կենտրոնական բանկի նկատմամբ վստահության բարձրացմանը և Կենտրոնական բանկի ընկալմանը՝ որպես թափանցիկ և բաց հաստատություն:

Գերազանցություն. Կենտրոնական բանկը իր խնդիրները իրագործելիս, մարտահրավերներին արձագանքելիս և միջազգային զարգացումներին դիմակայելիս ձգտում է հանդես գալ որպես բարեփոխումների նախաձեռնող և առաջատար: Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրումն ու ներդրումը Կենտրոնական բանկի գործունեության բոլոր ոլորտներում դիտարկվում է որպես անընդհատ գործընթաց՝ ապահովելով Կենտրոնական բանկի արդյունավետ զարգացումը:

Արհեստավարժություն. Առաջնորդվելով գործունեության յուրաքանչյուր ոլորտում արդյունավետության ձեռքբերմամբ՝ Կենտրոնական բանկը առաջնային է համարում մասնագիտական խորը գիտելիքներ ունեցող, և աշխատանքն արդյունավետ կատարելու համար անհրաժեշտ հմտություններով և ունակություններով օժտված աշխատակիցների ներգրավումը, նրանց շարունակական զարգացումը: Կարևորելով Կենտրոնական բանկի առջև դրված խնդիրներն իրականացնելիս միջազգային լավագույն փորձի և արդի մոտեցումների կիրառումը՝ Կենտրոնական բանկը խրախուսում է նախաձեռնողականությունն ու ստեղծագործական մտածելակերպը, բարենպաստ պայմաններ է ստեղծում աշխատակիցների վերապատրաստման, որակավորման միջազգային հավաստագրեր ստանալու և մասնագիտական աճի համար:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

Ֆինանսական համակարգ. Քանի որ Կենտրոնական բանկի քաղաքականությունը ուղղակիորեն արտացոլվում է ֆինանսական համակարգի մասնակիցների վարվելակերպում, ապա անհրաժեշտ արդյունավետություն ապահովելու համար վարվող քաղաքականությունը պետք է նրանց համար հասկանալի լինի: Որպես կարգավորող և վերահսկող մարմին՝ Կենտրոնական բանկը մշտապես ձգտում է օբյեկտիվ և արդար լինել ֆինանսական շուկայի մասնակիցների նկատմամբ՝ ապահովելով հավասար և առողջ մրցակցային դաշտ:

Հանրություն. Կենտրոնական բանկը հանրության հետ հաղորդակցվելու ընթացքում մի կողմից ձգտում է ձևավորել քաղաքականության նկատմամբ համարժեք սպասումներ, մյուս կողմից՝ առավել մատչելի մատուցել իր որդեգրած քաղաքականությունը՝ ազդակներ հաղորդելով հասարակությանը և տնտեսավարող սուբյեկտներին՝ նրանց որոշումների կայացման վրա ազդեցություն ունենալու նպատակով:

Գործընկերներ. Կենտրոնական բանկը համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների՝ Նախագահի աշխատակազմի, Կառավարության, Ազգային ժողովի և նրա հանձնաժողովների հետ: Բացի այդ, իր իրավասության շրջանակներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերը միջազգային ֆինանսական կազմակերպություններում, տարբեր երկրների կենտրոնական և այլ բանկերի հետ հարաբերություններում:


ԿԲ անձնակազմ. Մարդկային ռեսուրսը Կենտրոնական բանկի կարևորագույն ակտիվն է: Անձնակազմի նվիրվածությունը Կենտրոնական բանկի արժեքներին և առաքելությանը, ինչպես նաև գիտելիքներն ու հմտությունները հոգուտ ռազմավարական նպատակների իրագործման օգտագործելու պատրաստակամությունը Կենտրոնական բանկի գործունեության արդյունավետության և հաջողության գրավականն են: Հետևաբար, Կենտրոնական բանկի անձնակազմը, հանդես գալով որպես շահառու, անգնահատելի ներդրում ունի ռազմավարությամբ սահմանված խնդիրների և բանկի գործունեության արդյունավետ իրականացման գործում:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Կենտրոնական բանկը հիմնական նպատակն իրականացնելիս ձգտում է բարձր պահել իր՝ որպես անկախ կառույցի և Հայաստանի Հանրապետությունում միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում գների և ֆինանսական կայունության երաշխավորի հեղինակությունը՝ առաջնորդվելով տնտեսության կայուն զարգացման ապահովման և միջազգային շուկաներին ինտեգրվելու հեռանկարով, ձգտելով ունենալ ֆինանսական ծառայությունների ոլորտում տարածաշրջանային կարևոր դերակատարում: 2012-2014 թթ. Կենտրոնական բանկի ջանքերն ուղղվելու են միջազգային լավագույն փորձի ներդրմանն ու կիրառմանը ֆինանսական հատվածում՝ ապահովելով վերջինիս բազմազանությունն ու համաչափ զարգացումը:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2012-2014 թթ. համար ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը սահմանում է զարգացման ուղղվարական հետևյալ ուղղությունները.



Գների կայունության ապահովում

«Կենտրոնական բանկի լիազորությունը գների կայունության ապահովման շրջանակներում. գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո շարունակելով այնպիսի դրամավարկային քաղաքականության իրականացումը, որն ապահովում է գների կայունություն և հասարակության գնաճային սպասումների խարսխում նպատակային թիրախի շրջանակներում՝ անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելով մակրոտնտեսական կայունության և երկարաժամկետ հատվածում կայուն տնտեսական աճի ապահովման համար:

1. Ներկա իրավիճակը

Կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականությունն իրականացնում է՝ հիմնվելով գնաճի նպատակադրման ռազմավարության և լողացող փոխարժեքի քաղաքականության սկզբունքների վրա: Գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո գների կայունության ապահովումը դրամավարկային քաղաքականության առաջնային երկարաժամկետ նպատակն է, որին հասնելու համար Կենտրոնական բանկն ապահովում է թափանցիկության և հաշվետվողականության բարձր մակարդակ՝ հրապարակային դարձնելով դրամավարկային քաղաքականության ծրագրերը, խնդիրները, նպատակները, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու ուղիները:

Առաջնորդվելով վերոնշյալ սկզբունքներով, առաջարկի շուկերի գերակայության, դրանցով պայմանավորված երկրորդային ազդեցությունների և գնաճային սպասումների պայմաններում, ներկայումս ԿԲ-ն իրականացնում է միջնաժամկետ հատվածում գների կայունության ապահովմանն ուղղված այնպիսի քաղաքականություն, որն առավելագույնս ընկալելի է հասարակության համար:

2. Զարգացման հիմնական խնդիրները

- Գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգի, ինչպես նաև դրանց մեթոդաբանության շարունակական կատարելագործում և զարգացում՝ միջազգային լավագույն փորձի ներդրման և որակապես նոր տեղեկատվության օգտագործման միջոցով:
- Բաց, թափանցիկ, հասարակության համար առավել ընկալելի և կայուն սպասումներ ձևավորող դրամավարկային քաղաքականության իրականացում:
- Գնաճի բնույթի փոփոխման և համընդհանուր գնաճային զարգացումների պայմաններում Կենտրոնական բանկի նկատմամբ հասարակության վստահության բարձր մակարդակի ապահովում և գնաճային սպասումների խարսխում գնաճի նպատակային թիրախի շրջանակներում:

3. Զարգացման ակնկալվող արդյունքները և ձեռնարկվող միջոցառումները

<u>Ակնկալվող արդյունքներ</u>	<u>Միջոցառումներ</u>
<p>Կանխատեսումների առավելագույն ճշգրտության և հիմնավորվածության ապահովում</p>	<p>Դրամավարկային քաղաքականության մշակման և կանխատեսումների իրականացման համակարգի կատարելագործում.</p> <ol style="list-style-type: none"> 1. Դրամավարկային քաղաքականության հիմնական մոդելի ընդլայնում և շարունակական զարգացում՝ ներառելով գնաճի նպատակադրման սկզբունքներին, ՀՀ տնտեսության առանձնահատկություններին և միկրոհիմքերին առավելագույնս համապատասխանող՝ տնտեսավարող սուբյեկտների վարքագծային վերլուծություններ 2. Դրամավարկային քաղաքականության կարճաժամկետ մոդելների և կանխատեսման և վերլուծության մոդելների շարունակական զարգացում 3. Դրամավարկային քաղաքականության վերլուծությունների և կանխատեսման համակարգում հարցումների ինստիտուտի դերի մեծացում՝ հիմնական շեշտադրումը տեղափոխելով ուղղորդող հարցումների վրա
<p>Կենտրոնական բանկի հեղինակության բարձրացում, հասարակության համար առավել ընկալելի քաղաքականության իրականացում</p>	<p>Հասարակության կողմից գնաճի բնույթի, պատճառների և իրականացվող դրամավարկային ու արժույթային քաղաքականության ընկալման մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում</p>
<p>Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների միջոցով փոխանցումային մեխանիզմի ուժեղացում</p>	<p>ՀՀ դրամական շուկաների զարգացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում</p>

Ֆինանսական կայունության ապահովում

«Կենտրոնական բանկի լիազորությունը Ֆինանսական կայունության ապահովման շրջանակներում». այնպիսի վերահսկողական և կարգավորման քաղաքականության իրականացումն է, որի ներքո, նույնիսկ արտակարգ իրավիճակներում և կառուցվածքային փոփոխությունների դեպքում ֆինանսական համակարգը ունակ է շարունակաբար ապահովելու անհրաժեշտ իրացվելիության մակարդակ, գործարքների ու փոխանցումների անխափան իրականացում և խնայողությունների ներդրման լիարժեք հնարավորություն:

1. Ներկա իրավիճակը

Հայաստանի ֆինանսական համակարգում մեծ տեսակարար կշիռ ունի բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների ավելի քան 90%-ը: Այդ իսկ պատճառով ֆինանսական համակարգի կայունության գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում է բանկային համակարգի գործունեության ռիսկայնության բացահայտումն ու գնահատումը: Վերջին տարիներին Կենտրոնական բանկի կողմից իրականացվել են հակաճգնաժամային համակարգված միջոցառումներ (ներքին և արտաքին տնտեսությունից, ֆինանսական շուկաներից, ինստիտուտներից և ենթակառուցվածքներից բխող հնարավոր ռիսկերի գնահատում, մոնիտորինգ, և հակաճգնաժամային քաղաքականության իրականացում), ինչի արդյունքում միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքների ազդեցությունը հայաստանյան ֆինանսական համակարգի վրա նշանակալի չեղավ, և որևէ ֆինանսական ինստիտուտ վճարունակության խնդրի առջև չկանգնեց: Միևնույն ժամանակ, ապահովագրական ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնակիցները, ֆինանսական համակարգի այլ տարրերը բավականին փոքր են, և ֆինանսական կայունության տեսանկյունից վերջիններիս գործունեության հավանական ազդեցությունը ցածր է գնահատվում: Չնայած դրան, ԱՊՊԱ ներդրման շնորհիվ 51%-ով ավելացել են ապահովագրական ընկերությունների ակտիվները:

Ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության դաշտը շարունակում է պահպանել առաջատար դիրքերը տարածաշրջանում: Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի զարգացման, ֆինանսական համակարգում սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական գրագիտության մակարդակի հետագա բարձրացման նպատակով նախաձեռնած և ընթացքում գտնվող նախագծերի իրականացումը ֆինանսական ծառայությունների ներթափանցման և ֆինանսական միջնորդության խորացման լրացուցիչ նախադրյալներ է ստեղծում:

2. Զարգացման հիմնական խնդիրները

- Միջազգային լավագույն փորձին և սկզբունքներին համապատասխան՝ ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության շարունակաբար զարգացող այնպիսի միջավայրի ձևավորում, որը կապահովի ֆինանսական

համակարգի ռիսկերի (կայունության) և ֆինանսական համակարգի զարգացման լավագույն համակցություն: Եվրոմիությանն ինտեգրվելու ՀՀ որդեգրած քաղաքականության և ԵՄ - Հայաստան Ասոցացման համաձայնագրի շրջանակներում Եվրոմիության պահանջներին ֆինանսական ծառայությունների կարգավորման դաշտի համապատասխանեցում: Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի միջազգային ստանդարտներին համապատասխանող իրավական համակարգի ձևավորում:

- Ֆինանսական կայունությանն ուղղված այնպիսի համակարգի ձևավորում, որը կապահովի ֆինանսական կայունությունը խոցող հավանական ռիսկերի գնահատման և ճգնաժամերի կառավարման արդյունավետ համակարգերի առկայություն:
- Միջազգային լավագույն փորձի հիման վրա, միասնական փիլիսոփայության ներքո այնպիսի բարեփոխումների իրականացում, որոնք, ֆինանսական միջնորդության աճին զուգընթաց, կապահովեն տարբեր ֆինանսական հաստատությունների, ֆինանսական շուկաների և ֆինանսական ենթակառուցվածքի համաչափ և հավասարակշիռ զարգացում:
- Միջազգային լավագույն փորձի հիման վրա ֆինանսական ծառայությունների սպառողների շահերի պաշտպանության և բնակչության ֆինանսական գրագիտության և իրազեկվածության մակարդակի բարձրացման համակարգի զարգացում:

3. *Ջարգացման ակնկալվող արդյունքները և ձեռնարկվող միջոցառումները*

<i>Ակնկալվող արդյունքներ</i>	<i>Միջոցառումներ</i>
<p>Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի և վերահսկողության համապատասխանեցում միջազգային լավագույն փորձին</p>	<ul style="list-style-type: none"> - Ֆինանսական ծառայությունների ոլորտը կարգավորող օրենսդրության աստիճանական մոտարկում Եվրոմիության ակտերին և միջազգային գործիքներին՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության և Եվրոմիության միջև կնքվելիք Ասոցացման համաձայնագրի պահանջներին: - Ռիսկերի վրա հիմնված վերահսկողական համակարգի կատարելագործում և համախմբված վերահսկողության համակարգի նախագծում և աստիճանական ներդրում: - Բազել 2 և Բազել 3 համակարգերի հիմնական սկզբունքների աստիճանական ներդրում: - Սուլվենսի 1 և Սուլվենսի 2 համակարգերի հիմնական սկզբունքների աստիճանական ներդրում: - Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի (BCBS), Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IAIS) և Արժեթղթերի վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IOSCO) կողմից սահմանված վերահսկողական սկզբունքներին և չափանիշներին աստիճանական համապատասխանեցում:

	<ul style="list-style-type: none"> - Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի միասնական տեղեկատվական միջավայրի ձևավորում, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական դաշտի բարեփոխում:
<p>Միջազգային լավագույն փորձին համահունչ՝ ֆինանսական կայունության ապահովման և ճգնաժամի կառավարման արդյունավետ համակարգերի առկայություն</p>	<ul style="list-style-type: none"> - Ֆինանսական համակարգում առկա ռիսկերի գնահատման մեթոդների կատարելագործում: - Ճգնաժամերի կառավարման հայեցակարգի մշակում: - Սիմուլյացիոն խաղերի կազմակերպում և արտակարգ իրավիճակներում արձագանքման ծրագրի մշակում: - Մակրոպրոդեցիալ վերլուծությունների միջոցով ոչ ֆինանսական համակարգից ֆինանսական համակարգ ներթափանցող ռիսկերի գնահատման համակարգի ներդրում և կատարելագործում:
<p>Ֆինանսական նոր հաստատությունների, ֆինանսական ենթակառուցների, գործիքների և ծառայությունների ներդրման շնորհիվ ֆինանսական միջնորդության աճ</p>	<ul style="list-style-type: none"> - Ֆինանսական համակարգի համակողմանի զարգացման հայեցակարգի մշակում: - Անկանխիկ և էլեկտրոնային ֆինանսական ծառայությունների ներդրմանը և աստիճանական զարգացմանը նպատակաուղղված աշխատանքների իրականացում: - Հաշվարկների իրականացման «հիբրիդ» և բորսայական առևտրի իրականացման «T+3» համակարգերի նախագծում և աստիճանական ներդրում: - Հիփոթեքային երկրորդային շուկայի ձևավորման աշխատանքների իրականացում, մասնավորապես՝ հիփոթեքի իրավունքների ձևակերպման գործընթացների պարզեցում և ծախսատարության նվազեցում, հիփոթեքային պարտատոմսերի թողարկում: - Կոլեկտիվ ներդրումային սխեմաների, այդ թվում՝ կուտակային կենսաթոշակային համակարգի ձևավորման և զարգացմանը ուղղված աշխատանքներ: - Կապիտալի շուկայի զարգացմանը ուղղված միջոցառումների իրականացում՝ համաձայն «ՆԱԱԴԱԲ Օ-Էմ-Էքս»-ի հետ համատեղ մշակված ծրագրի:
<p>Սպառողների շահերի պաշտպանության և հանրության տարբեր թիրախային խմբերի ֆինանսական կրթման համակարգի զարգացում</p>	<ul style="list-style-type: none"> - Շուկայական վարվելակերպի կարգավորման և վերահսկողության համակարգի կատարելագործում, այդ թվում՝ ֆինանսական շուկայի արդարությանն ուղղված և կանխարգելիչ գործառնությունների հստակ տարանջատում: - Սպառողների շահերի պաշտպանությանը նպաստող օրենսդրական դաշտի զարգացում և կատարելագործում: - Ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակում: - Կենսաթոշակային բարեփոխումների, պարտադիր ապահովագրության տեսակների և այլ ֆինանսական ծառայությունների վերաբերյալ լուսաբանման/կրթական աշխատանքներ:

Ազգային արժույթի շրջանառության ապահովում

ՀՀ կենտրոնական բանկի լիազորությունը ազգային արժույթի շրջանառության ապահովման շրջանակներում. անընդհատության և հուսալիության սկզբունքների ներքո կարգավորման, կազմակերպման և վերահսկողական այնպիսի քաղաքականության իրականացում, որը տնտեսության բոլոր սուբյեկտների համար կապահովի կանխիկ դրամի նկատմամբ ձևավորվող պահանջարկի անխափան բավարարումը ըստ անհրաժեշտ ծավալների, կառուցվածքի, որակի և ժամկետների:

1. Ներկա իրավիճակը

2010 թ. ընթացքում շահագործման է հանձնվել ՀՀ ԿԲ գլխավոր գրասենյակի նոր դրամարկղային հանգույցը, որը հագեցած է հաճախորդների սպասարկման, կանխիկ դրամի մշակման և պահպանման նորագույն տեխնիկայով, կիրառվում են գործընթացների կազմակերպման ժամանակակից տեխնոլոգիաներ: Գրեթե ամբողջությամբ ավտոմատացվել են կանխիկի վերահաշվման, տեսակավորման, փաթեթավորման և ոչնչացման գործընթացները, որի արդյունքում զգալիորեն կրճատվել են նախկինում դրսևորվող ռիսկերը:

Իր հաճախորդների դրամարկղային սպասարկման պայմանների բարելավման նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 2009-2010 թթ. ներդրել է նոր էլեկտրոնային համակարգ, որի միջոցով իրականացվում է փաստաթղթաշրջանառությունը ՀՀ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և ինկասացիոն կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև:

Առաջնորդվելով միջազգային լավագույն փորձով և հետևելով վերջին դրամագիտական զարգացումներին՝ իրականացվում են ՀՀ թղթադրամների շարքի նույնականացման աշխատանքներ՝ միևնույն սկզբունքով սահմանելու համար ձևավորման և պաշտպանական հատկանիշները, ինչն ավելի դյուրին կդարձնի թղթադրամների իսկության ստուգման գործընթացը:

Տպագրական ստանդարտներին թղթադրամի համապատասխանության, արտադրության արդյունավետ գնի, ժամանակակից պաշտպանական հատկանիշների հետ թղթադրամի ձևավորման տարրերի ներդաշնակ համադրման, ինչպես նաև գեղարվեստական արժանիքների համար 2010 թ. 100 000 դրամ անվանական արժեքով թղթադրամն արժանացել է միջազգային մրցանակի:

Սկսվել է նոր տեսակի՝ ներդրումային դրամանիշերի և շրջանառու հիշատակային մետաղադրամների թողարկումը: Հանրությանը Հայաստանի դրամաշրջանառության պատմությանը ծանոթացնելու նպատակով ՀՀ տարածաշրջաններում կազմակերպվել են ցուցահանդեսներ:

2. Զարգացման հիմնական խնդիրները

- Կանխիկ դրամաշրջանառության համակարգում դրսևորվող ռիսկերի նվազեցում միջազգային լավագույն փորձին և սկզբունքներին համապատասխան՝ կանխիկ դրամով բոլոր հնարավոր գործառնությունների, դրանց հետ կապված տեղեկատվական հոսքերի ավտոմատացման միջոցով:
- Կանխիկ դրամաշրջանառության ոլորտի վերլուծելիության, ինչպես նաև ՀՀ արժույթի պահուստների համալրման ծավալների կանխատեսման մեթոդների շարունակական կատարելագործում՝ միջազգային լավագույն փորձի ներդրման, որակյալ (արժանահավատ, օպերատիվ, ամբողջական) տեղեկատվության օգտագործման և հաշվարկների ավտոմատացման միջոցով:
- Դրամանենգության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում՝ դրամանիշերի իսկությունը ստուգող տեխնիկական բազայի ընդլայնման, ինչպես նաև դրամանիշերի պաշտպանական հատկանիշների վերաբերյալ հասարակությանը իրազեկման արդյունավետ մեթոդների մշակման և ներդրման միջոցով:
- Շրջանառությունում պատշաճ որակի դրամանիշերի ապահովում՝ դրանց նկատմամբ վերահսկողական գործուն մեխանիզմների մշակման, ներդրման և իրականացման միջոցով:
- Հասարակության շրջանում Հայաստանի ազգային, պատմական, մշակութային, հոգևոր արժեքների տարածում, ինչպես նաև հայ և օտարազգի հավաքորդների դրամագիտական պահանջարկի բավարարում՝ հուշադրամների, շրջանառու հիշատակային մետաղադրամների թողարկման միջոցով:

3. Զարգացման ակնկալվող արդյունքները և ձեռնարկվող միջոցառումները

<u>Ակնկալվող արդյունքներ</u>	<u>Միջոցառումներ</u>
<p>Կանխիկ դրամաշրջանառության ոլորտում դրսևորվող ռիսկերի նվազեցում</p> <p>Կանխիկ դրամաշրջանառության ոլորտին առնչվող որակյալ տեղեկատվության հավաքագրում, ոլորտի պատշաճ վերլուծելիության ապահովում</p>	<p>ՀՀ ԿԲ-ում կանխիկ կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ներդրում, կանխիկ դրամաշրջանառության ոլորտին առնչվող տեղեկատվական հոսքերի ավտոմատացում</p>
<p>Շրջանառությունում պատշաճ որակի դրամանիշերի ապահովում</p>	<p>Դրամանիշերի վերամշակման տեխնիկական բազայի ընդլայնում</p>
	<p>Հասարակության կողմից դրամանիշերի պաշտպանական հատկանիշների, վճարունակության չափանիշների, կեղծման հիմնական եղանակների ճանաչելիության մակարդակի բարձրացման նպատակով միջոցառումների իրականացում</p>

Ինստիտուցիոնալ զարգացում

Ինստիտուցիոնալ զարգացման շրջանակներում ՀՀ ԿԲ խնդիրն է միջազգայնորեն ճանաչված լինել որպես հեղինակավոր, անկախ, ընկալելի, գիտական հետազոտությունների վրա հիմնված տնտեսական քաղաքականություն իրականացնող, հաղորդակցման համար բաց, թափանցիկ և միջազգային հարաբերություններում լիարժեք գործընկեր հանդիսացող կառույց, ապահովել Կենտրոնական բանկի մասնագիտական և հետազոտական ներուժի զարգացումը և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

1. Ներկա իրավիճակը

Կենտրոնական բանկը, հետևելով կենտրոնական բանկերի կառավարման միջազգային միտումներին և զարգացումներին, մշտապես իրականացրել է բանկի կառավարման կառուցվածքի օպտիմալացում՝ ներդնելով անհրաժեշտ արդյունավետ համակարգեր: Մասնավորապես՝ բանկն ամբողջովին անցել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգին, իրականացրել է Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգի զարգացման և վերջինս միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու աշխատանքներ, հաստատել է գործընթացների անընդհատության ապահովման ռազմավարությունը:

Կենտրոնական բանկը, կարևորելով աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացումը, ինչպես և նախորդ տարիներին, հատկացրել է համապատասխան ռեսուրսներ՝ աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացումը ապահովելու համար: Մասնավորապես՝ ընդլայնվել է միջազգային մասնագիտական որակավորման հավաստագրեր տրամադրող ոլորտների ցանկը, և խրախուսվել են քննությունները դրական հանձնած աշխատակիցները: Միաժամանակ, գիտակցելով աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու հարցում շահագրգիռ աշխատակիցներ ունենալու կարևորությունը, Կենտրոնական բանկը աշխատակիցների աշխատանքի կատարողականի գնահատման գործընթացը կատարելագործելու և միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու քայլեր է ձեռնարկել՝ հնարավորություն ընձեռելով ըստ արժանվույն գնահատելու և խրախուսելու առավել մեծ ներդրում ունեցող աշխատակիցներին:

Ներկայումս Կենտրոնական բանկում գործող տնտեսական հետազոտությունների առանձնացված ստորաբաժանումը, տնտեսագիտական տեսությունների անընդհատ զարգացմանը զուգընթաց, կիրառական տնտեսագիտության միջազգային փորձին համահունչ, կատարում է մակրոտնտեսական և միկրոտնտեսական հետազոտություններ՝ նպատակաուղղված դրամավարկային, ֆինանսական քաղաքականությունների արդյունավետ իրականացմանը: Ստորաբաժանումն իր աշխատանքներում ներգրավում է նաև Հայաստանի և արտերկրի առաջատար բուհերի՝ հետազոտական կարողություններ ունեցող լավագույն մասնագետներին:

2. *Չարգացման հիմնական խնդիրները*

- Ապահովել ԿԲ կառուցվածքի և կառավարման համակարգի շարունակական օպտիմալացումը:
- Բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը՝ ներգրավելով, պահպանելով և շահադրդելով անհրաժեշտ ներուժ ունեցող աշխատակիցների: Գործել որպես անձնակազմը արդյունավետ կառավարող և մասնագիտական ներուժը մշտապես բարելավող ու զարգացնող կառույց՝ առաջնորդվելով գիտելիքի գերակայության սկզբունքով:
- Լինել հենց իր՝ Կենտրոնական բանկի՝ որպես տնտեսական կարևորագույն ինստիտուտի զարգացումը մշտապես վերլուծող, անընդհատ կատարելագործվող, սովորող և միջազգային լավագույն փորձով առաջնորդվող կազմակերպություն: Մշտապես մնալ տնտեսական միջավայրի փոփոխություններին արագ արձագանքող և տնտեսական գործընթացների վրա արդյունավետորեն ազդող ու դինամիկ զարգացող կառույց:
- Միջազգային լավագույն փորձի և արդյունքների հիման վրա իրականացնել Կենտրոնական բանկի գործառույթների իրավական, ֆինանսական, տեղեկատվական և նյութատեխնիկական սպասարկման բարեփոխումներ:
- Ապահովել Կենտրոնական բանկի ծառայությունների ամբողջական և արդյունավետ տրամադրումը:
- Մշակել հասարակայնության հետ կապերի ոլորտի նոր PR-ռազմավարություն՝ հանրության բոլոր շերտերին ԿԲ գործառույթներն ու ձեռքբերումները մատչելի ներկայացնելու նպատակով:

3. *Չարգացման ակնկալվող արդյունքները և ձեռնարկվող միջոցառումները*

<i><u>Ակնկալվող արդյունքներ</u></i>	<i><u>Միջոցառումներ</u></i>
Տնտեսական միջավայրին համահունչ՝ Կենտրոնական բանկի օպտիմալ կառուցվածքի և գործընթացների արդյունավետության և անընդհատության ապահովման բարձր մակարդակ	Կենտրոնական բանկի կառուցվածքի և գործունեության պարբերաբար վերլուծությունների իրականացման համակարգերի ներդրում՝ ուղղված ռիսկերի նվազեցմանը, արդյունավետության բարձրացմանը և անընդհատության ապահովմանը:
Կենտրոնական բանկի գործառույթների արդյունավետ իրականացում՝ նվազագույն ռիսկայնությամբ և աշխատատարությամբ	Ժամանակակից պահանջներին համապատասխան տեղեկատվական և կառավարման համակարգերի ներդրում
Կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականությունների շրջանակներում որոշումների կայացման արդյունավետության բարձրացում	Մակրո- և միկրոտնտեսական հետազոտությունների, վերլուծությունների և կանխատեսումների կարողությունների ընդլայնում

<p>Գործընթացների անընդհատության ապահովում</p>	<p>Կենտրոնական բանկի պահուստային բանկի հնարավորությունների և անվտանգության բարձրացում</p>
<p>ԿԲ գործառույթների՝ հանրության համար ավելի ընկալելի ներկայացում</p>	<p>ԿԲ այցելուների կենտրոնի շահագործում</p>
<p>ԿԲ անձնակազմի ռազմավարական կառավարում՝ միջազգային լավագույն փորձի և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ</p>	<p>ԿԲ անձնակազմի համալրման քաղաքականության արդիականացում՝ միջազգային լավագույն փորձի ներդրմամբ ԿԲ աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման քաղաքականության և վերապատրաստման արդյունքի գնահատման գործիքակազմի լրամշակում</p>
<p>Կենտրոնական բանկի գիտական ներուժի հզորացում և պետական տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացում</p>	<p>Դիլիջանում ԿԲ ուսումնահետազոտական կենտրոնի հիմնում և շահագործում (տես՝ հավելվածը)</p>

ԿԲ ուսումնահետազոտական կենտրոնի հիմնում

Կենտրոնական բանկի՝ որպես ֆինանսատնտեսական, գիտական և կրթական կարևորագույն ինստիտուտի ամրապնդմանը միտված կարևորագույն նախագիծ է Դիլիջանի տարածաշրջանային ուսումնահետազոտական կենտրոնի (այսուհետ՝ կենտրոն) հիմնումը: Կենտրոնը հավակնում է դառնալ միջազգային սեմինարների և գիտաժողովների տարածաշրջանային կարևոր ինստիտուտ, ապահովված կլինի միջազգային գիտահետազոտական նմանատիպ կենտրոններում շրջանառվող տվյալների շտեմարաններով, որոնք հնարավորություն կտան ընդլայնելու ուսումնասիրության ոլորտները և ապահովելու իրականացվող աշխատանքների կիրառելիությունն ու մրցունակությունը: Նախատեսվում է նաև միջոցներ ձեռնարկել նոր, ժամանակակից շտեմարանների կառուցման ուղղությամբ, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա հայաստանյան և միջազգային հետազոտողների համար՝ Հայաստանի տնտեսության վերաբերյալ իրականացնելու կիրառական աշխատանքներ: Այս համալիրի շահագործումը, որը նախատեսվում է մինչև սույն ռազմավարական պարբերաշրջանի ավարտը, հնարավորություն կտա իրականացնելու հետևյալ միջոցառումները.

- Ուսումնական կենտրոնի ստեղծում, որտեղ, միջազգային չափանիշներին համապատասխան, կիրականացվեն տնտեսագիտության և ֆինանսների բնագավառներին առնչվող ուսումնական ծրագրեր, մասնավորապես՝
 - Միջազգային առաջատար գիտակրթական հաստատություններից հրավիրված բարձրակարգ դասախոսների, ինչպես նաև հայտնի մարդկանց կողմից դասախոսությունների, սեմինարների անցկացում: Հրավիրված փորձագետները զուգահեռաբար կկատարեն նաև գիտահետազոտական աշխատանքներ՝ համագործակցելով Կենտրոնական բանկի՝ տնտեսական հետազոտություններ իրականացնող աշխատակիցների հետ:
 - Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ համատեղ հետբուհական կրթության կազմակերպում:
 - Նախագծերի կառավարման և ֆինանսական ինժինիրինգի թեմայով վերապատրաստում և հավաստագրում:
- Կենտրոնի կողմից նպատակային, հանրապետական նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքների իրականացում, որոնք միտված կլինեն պետական տնտեսական քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացմանը:
- Ֆինանսական համակարգի միջազգային մրցունակության բարելավմանը նպատակաուղղված հետազոտական աշխատանքների կազմակերպում:
- Հայաստանի համար կարևոր շուկաների զարգացումների մոնիտորինգի իրականացում: